

ԳՐԱԴԻՍՈՒՄՈՒԹԻՒՆ, ԱՐՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ԳԻՐՔ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լույս տեսավ Ֆրանսիայի Գիտական Ներազնաբանությունների Ազգային կենտրոնի անդամ, Ֆրանսիացի ժամանակակից հայտնի պարմաբան ու գրող Ֆիլիպ Վիդելիեի (Philippe Vidalier) «Թուրքական գիշեր» գրքի հայերեն թարգմանությունը¹, որը փայլուն հայերենով կարարել է «Ս. Սահակ- Ս. Մեսրոպ» և «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանների ասպետ Պարգև Շահբազյանը: Գիրքը հրատարակվել է Ֆրանսահայ բարերար «Horison-Arménie» ընկերության փութին ժերար Միքիանյանի հովանավորությամբ:

Նայական հարցը և ցեղասպանությունը պարմագրության մեջ լուսավանդված են բազմաթիվ աշխարհայիններում, փաստաթղթերի և վավերագրերի ժողովածուներում, հուշագրություններում, աշխարհի տարբեր երկրների հասարակական-քաղաքական ու գիտական պարբերականներում:

Տակավին Բաֆֆին էր մերկացնում թուրքական քաղաքականության խարդավանքները, հետևողականորեն բացահայտում այն մարայության պարմաբանությունը, թե հնարավոր է փրկություն ապագա «քաղաքակրթված» Թուրքիայում: «Այդ ցնորք է, թուրքն այսօր անկիրթ բարբարոս է, բայց քաղաքակրթվելուց հետո կդառնա կրթյալ ավագակ և այն ժամանակ ավելի վրանգավոր կդառնա... Մենք ունենք պարմություն, 850 տարվա պարմություն, թե ինչպես է վարվել մեզ հետ թուրքը: Նրա ամեն մի քողն արյունով ու արտասուքով է գրված: Ով որ ուրանում է պարմությունը, առաջ ինքն է կնքում իր դավաճանության դարակնիքը»:

Այս դավաճանությանը համահունչ, դեռևս արդուի համիդյան շրջանում, հայերի նկարմամբ կարարված ցեղասպանությունն իր արտացոլումն ու դարապարտումը գրել է այնպիսի աշխարհայիններում, ինչպիսիք են Ֆրանսիայի արարաքին գործերի նախարարության հրատարակած «Դեղին Գիրք» խորագիրը կրող փաստաթղթերի ժողովածուն, 1900-2000-ական թթ. Ֆրանսիայում լույս տեսած Նայական հարցին ու հայոց ցեղասպանությանը նվիրված ավելի քան 400 գրքեր և այլն: Դրանցից են՝ Ա. Ադուսիդեսի «Նայերը և երիտթուրքերը: Կոտորած Կիլիկիայում» (1910), Ռենե Պիմոնի «Նայերի ոչնչացումը: Եղանակը՝ գերմանական, գործը՝ թուրքական» (1916), Էմիլ Դոմերգի «Նայաստանը, կոտորածները և Արևելյան հարցը» (1917), Ժակ դը Մորգանի «Ընդդեմ Արևելքի բարբարոսների» (1918) և այլն: Այժմ էլ Ֆրանսիացի պարմաբանները նպարակասլաց քննադատության են ենթարկում ժամանակակից թուրք պարմագրության ու պաշտոնական քաղաքական կողմից հայերի ցեղասպանության կեղծումը: Անգնահատելի հսկայական ավանդ ունեցող

1 Ֆիլիպ Վիդելիե, Թուրքական գիշեր, թարգմ. Ֆրանսերենից Պարգև Շահբազյան, Եր., 2010:

աշխարհահռչակ Իվ Տերնտը շեշտում է, որ ներկա թուրքական կառավարությունն ու թուրք պարմաբաններն ամեն կերպ կեղծում են անցյալը, արգելում 1918-1920 թթ. սկզբի թուրքական հրապարակումների և հայաբարարությունների վկայակոչումները, որոնցում ընդունվում էր Թուրքիայի հայ բնակչության կանխամտածված բնաջնջման փաստը: Նեղինակը եզրակացնում է, որ եթե թուրքական պարմագրությունն ընդունել հայերի ցեղասպանության իրողությունը, ապա հարկ կլինի վերաշարադրել Թուրքիայի ամբողջ պարմությունը:

Ֆիլիպ Վիդլիլի «Թուրքական գիշեր» գրքի հայերեն թարգմանության առաջաբանում պարմական գիտությունների դոկտոր ակադեմիկոս Մանվել Զուլայանը նշում է, «Օրար քաղաքական գործիչներից հայոց հարցի նվիրյալներ դարձան այնպիսի հանրաժանող դեմքեր, ինչպիսիք են Ժ. Կոնստանտին, Ժ. Ժորեսը և այլք: Արդուիսմիդյան ժամանակաշրջանի հայոց ցեղասպանությանն անդրադարձան նաև մի շարք ֆրանսիացի հոգևոր գործիչներ՝ հայ ժողովրդի նվիրյալ՝ Պիեռ Կիյարը, աբբա Պիզանին, աբբա Լ. Գոնդալը, Ժ. Ալպիան և ուրիշներ: Եւ վերջապես, Ֆրանսիան դարձավ այն երկիրը, որն առաջիններից մեկը պետականորեն ճանաչեց հայոց ցեղասպանությունը»:

Եւ ահա այս բոլորի վրա մի նոր անակնկալ.

Ժամանակակից ֆրանսիացի հեղինակ Ֆիլիպ Վիդլիլի «Թուրքական գիշեր» խորագրով աշխատության հմուտ ու մեծաթիվ հայերեն թարգմանությունը նոր մի անակնկալ է, ասված է առաջաբանում: Նեղինակն իր աշխատությունը շարադրելիս չի ընթացել պարմագրության ավանդական ուղիով. պահպանելով հանդերձ ժամանակագրական հաջորդականությունը՝ «չի արձանագրել իր կողմից մեջբերված որևէ փաստաթղթի թվագրությունը: Նման մեթոդաբանությամբ հեղինակը ձգտել է առանձին դրվագների հոգեցունց պարկերներով վեր հանել թուրքերի կարարած աննախադեպ ոճագործության բուն էությունը, իմաստը»:

Թարգմանիչն իր հերթին նշում է, որ գիրքը, բացի գեղարվեստական արժեքից, ունի նաև պարմական կարևոր նշանակություն: Այն վերաբերում է 1895-1896 թթ. համիդյան կոտորածներին, ինչպես նաև 1915 թ. Հայոց ցեղասպանությանը՝ երիտթուրքերի պարագլուխների գործադրած սպանողի սահմնեցուցիչ նկարագրություններով: Որպես օրար պարմաբանի կողմից բերված վավերական փաստերի անաչառ վկայություն, գիրքը հետաքրքրական և ազգային կարևոր նշանակություն ունեցող աշխատություն է և, որպես այդպիսին, արժանի է իր պարվավոր տեղի ունենալու յուրաքանչյուր հայ ընթերցողի գրադարանում, որպես կարարված ցեղասպանության հավելյալ մի ապացույց ու բացահայտ դարապարություն ժամանակակից օրարագի պարմաբանի կողմից:

Ֆ. Վիդլիլի երկի առանձնահատկություններից մեկն այն է, որ լույս վավերական փաստերի շարադրանք չէ, այլ պարմական հենքի վրա կառուցված յուրահատուկ վիպական սյրեղծագործություն, որտեղ տրված է յուրաքանչյուր գործող անձի ցայտուն բնութագիրը: Նեղինակը հեզնախառն սարկագմով վեր է հանում սմսեղուկ և արյունաշար Արդուլ Նամիդի խորամանկությունը՝ խառնված նրա ողորմելի երկչությունից, եղևնագործ փաշաների հոգեկան սնանկությունը՝ Էնվերի մեծամտությունը, Թալաթի անկողնում համառությունը, Զեմալի սնափառությունը և այլն:

Ֆիլիպ Վիդլիեն ուրիշ գլուխ ցելին է թաթախում Ֆրանսիայի Ակադեմիայի ամօթը հանդիսացող, Ֆրանսիական Ակադեմիայի թրքամոլ անդամ Պիեռ Լոթին:

Ընթերցողը գրքում առաջին անգամ որպես նորություններ՝ կհանդիպի որոշ պարմական անձանց հետ կապված իրադարձությունների: Նայ ընթերցողին նաև նորություն է և հերաբրբեր, Կիան կերպար՝ «Լեռան ծերունի» անվան Կիան թաքնված թուրք լրագրողի կերպարը, որն սպառնից կերպով ներկայացնում է թուրքական պետության ողջ էությունը:

Գիրքը հարուստ է նաև հերաբրբերական ճոխ ծանոթագրություններով՝ դյուրացնելու համար ընթերցողի իմացությունը կրոնի, պարմության, փիլիսոփայության, գրականության, լեզվի, սովորությունների վերաբերյալ:

«Թուրքական գիշեր»-ը բաղկացած է քսանմեկ գլուխներից. մի քանիսից համառոտ մեջբերումներ ենք կարարում: Մեր ժամանակակիցն այս ամենը Կիանը է Սուլթանիթում: Բեմագիրը նույնն է:

«Այլապես բաց կթողնեմ իմ մոլեռանդներին». սովորություն ուներ հակաճառելու սուլթանն ամեն անգամ, երբ Ազգերի դաշնակցությունը ձևացնում էր, թե դարապարտում էր նրա գործերակերպը: ... «Բաղաբը կրակի և արյան մեջ է», հեռագրում էր Դիարբեքի Ֆրանսիական հյուպարոսը 1895 թ. նոյեմբերի 2-ին, գիշերվա ժամը 1-ին, Բարձր Դռանն առնալով իր դեսպանին... Երբ ամբոխի մոլեգնությունը հանդարտվեց, երբ դիակները հավաքեցին, և Դիարբեքի կրկին ընկավ իր առեղծվածական թմրության մեջ, Ֆրանսիացի հյուպարոս Մերինը շարադրեց հանգամանակից մի գեկուցագիր... ինչքան կարող էր՝ Կիանը դիակների հաշիվը... Նյուպարոսը մոլեգնած խուժանին, հարձակվողներին, մարդասպաններին, ջարդերի հեղինակներին մարմնանշելու համար գործածում էր մերթ «մահմեդականներ», մերթ «քրդեր» բառերը: Սակայն մի բան, որ նա մարմնանշում էր առանց վարանելու, այն էր, որ այդ եղելությունները հրահրում էին իշխանությունները... «Ոստիկանությունն ու գործը միջամտեցին միայն հարվածելու համար գոհերին»,-վկայում էր ակադեմիական հյուպարոսը: 119 գլուխը մոխրի էին վերածվել այդ գավառում, իսկ ըստ հյուպարոսի, մեռածների և անհետ կորածների թիվը հասնում էր երեսուն հազարի: «Անիմանալի վայրագությամբ ոճրային արարքներ են գործվում... սարսուռ է անցնում մարմնովս, երբ մարածում եմ այդ մասին»:

«Թողեք մեզ, որ գնանք Իսթանբուլ. Վեհապետը թույլ է տվել, որ սպանենք հայերին», ոգևորված պահանջում էին վարձկանները, սպանակները, գյուղի դարաբեկապարտները, երբ իմացան սպասված Մեծ կոտորածի լուրը: Խաս-գյուղ թաղամասի ծամածուռ փողոցներում կավիճով նշված էին քրդերի դռները... «Այս մեկը գյավուր (անհավար) է: Վեհապետը թույլատրել է, որ սպանենք նրան: Երեկոյան նրանք գալիս էին... լավ խմբավորված, գալիս էին զինված երկաթե գավազաններով, յաթաղաններով, խոհանոցի սրածայր, մեծ դանակներով, կացիներով, լայնաբերան դանակներով, մարմում փայտաշեն քրդեր, դուրս հանում մարդկանց՝ բաշելով թևերից, սրունքներից, մազերից և սկսում էին գանահարել, թրալել, կացնահարել նրանց: Անշունչ մարմնի անդամներ, թալարացող ձեռքեր, ուրբեր թռչում էին օդում: «Ծախում ենք խոզի քոթիկներ», ծիծաղելով գոռում էին մարդասպանները: Արյունը ցայտում էր ուժգնորեն, առվակներ կազմելով՝ հոսում գառիվայր՝ բոլորելով գետնի յու-

րաքանցյուր անհարթությունը: Մահակների ծանր ու կտրուկ հարվածների Կրակ ջախջախվում էին գանգերը՝ սպառնալիք կեղտոտելով ուղեղի խյուսերով: Սովաջիններն² իրենց ամբողջ ուժով հարվածում էին մեծերին, փոքրերին,... կանանց, ալեխառն մորուքներով փղամարդկանց,... կարդալ ու հաշվել իմացող բոլոր մարդկանց: Նրանք գոհերի գլուխները ջախջախելով՝ խոնքի էին վերածում, ապա մեկնում իրենց հափշտակած ավարով:

Նրանք վերցնում էին ամեն ինչ՝ դրամ, կահկարասի, գոհարեղեն, պղնձե ծոբակներ, հնամաշ հագուստներ, կաշվե հոդաթափեր և այլն: Դա նրանց իրավունքն էր: «Վեհապետը թույլ է տվել»: ...Նահանգների թուրք զինվորականներն իրենց ընտանիքներին փողեկացնում էին, որ կապարված վերջացած է իրենց պարտականությունը: Նրանք լուրեր էին հաղորդում նրանց՝ գրելով. «... մենք սպանեցինք հայերին: Բոլորն էլ կեր դարձան շներին... Եթե հարցնեք, թե ինչպես են մեր զինվորներն ու բաշխողները, ապա նրանցից ոչ մեկի քիթը չարյունոտվեց»: Զինվորները լավ էին զգում իրենց: Առաջադրանքը կատարվել էր հեշտ և անվրանգ: ... Մոլորված մի ֆրանսուհի, որ հյուսպապոսարանի մի պաշտոնյայի կին էր, պահում էր փողի ունեցող իրադարձությունների օրագիրը: «Շուկայում սպանեցին բոլորին: Ոչ մեկ հայ չվերապրեց... Ավարներով բեռնավորված զինվորներ գնում-գալիս են փողոցների ծայրերին արյունվա ձեռքերով... Բոլոր հացագործները խողխողված լինելով՝ քաղաքում այլևս հաց չկա... Զոհերի գիշահոտը բռնել է ամբողջ քաղաքը: Սպիտակ են փակել պապուհանները... Միսը մեզ զգվանք կպարծառի երկար ժամանակ... Փողոցում երևում են շներ, որոնց երախից կախված են մարդկային մարմնի կտրվածքներ...»: Բանիմաց մի ազգագրագետի համար, որը դասփարակվել էր Օբսիդոլում, և որին չէին զարմացնում բարբարոսական բարքերի ամենամասնական իրականությունները, կրոնասեր այդ մարդու համար, որը պարզևարվել էր Լեոն 13-րդ պապի ոսկյա շքանշանով, գանգվածային այս սպանող թվում էր անըմբռնելի, անբացատրելի, նույնիսկ ցնցող: Վիլյամ Միթչել Ռեմսին, որն ուսումնասիրել էր սանսկրիտ լեզուն և օսմաներենը, հեղափոխական լեզվ լեռները, մեկնաբանել փարսեական Պողոս առաքյալի թղթերը և խորապես ծանոթ էր Նայր-նության գրքում Ասիայի 7 եկեղեցիների նամակներին, այս մարդն անգամ... անորակելի այս սպանողի առջև մնացել էր ծայրաստիճան ապշած: Ահա թե ինչ էր գրում նա այդ մասին. «... չարի ճանաչողությունը, իր ամենաճարպար նկարագրությամբ իսկ չի կարող գործել այն ազդեցությունը, որ թողնում էր կոպորածի այդ փեսարանն ականապրեսի վրա»:

Յավի աղաղակները, ողբերը, լացուկոծը եղերական դառնությամբ լցրին Դիարբեքի, Տրապիզոնի, Երզնկայի, Էրզրումի, Մեհապիայի, Մուշի, Խարբերդի, Մալաթիայի, Բիթլիսի, Վանի, Կեսարիայի, Ադանայի, Ուրֆայի, Ալեքսանդրիայի ցերեկներն ու գիշերները... Զարհուրելի լուրեր էին գալիս այդ շրջաններից: Գալիս էր նաև մահվան ստվերը» (Գ. Բ):

«... Միացյալ Նահանգների դեսպան Նենրի Մորգենթաուն որոշեց այդ մասին իր մտահոգությունները հայտնել Միություն և Առաջադիմություն Կոմիտեի ղեկավարների ղեկավարին՝ ներքին գործոց նախարար Թալաթին՝ հուսալով, որ իր միջամտությունը բարենպաստ մի օրվա կհանդիպի: Թալաթը չէր սիրում, որ իր հետ խոսեն հայերի մասին. դա կարաղեցնում էր նրան: «Ինչու՞ եք հեղափոխվում հայերով, - հարցրեց նա կոպիտ կերպով,

2 Սովաջի-թուրքերեն սովա բառից = հասար գալագան, մահակ, բիր: Սովաջի = մահակներով հարվածող:

- դուք հրեա եք, եւ այդ մարդիկ քրիստոնյա են»: Այս պարզունակ դարձումն ապշեցրեց դեսպանին... «Երեւի դուք չեք հասկանում, որ ես այսպէղ եմ գտնվում ոչ թե հրեայի հանգամանքով, այլ՝ որպէս ամերիկյան դեսպան: Դուք բազմիցս ասել եք ինձ, թե ցանկանում եք Թուրքիան դարձնել դեպի առաջադիմություն գնացող մի ազգ: Այն ձեռք, որով դուք վարվում եք հայերի հետ ձեզ չի օգնի բնավ իրագործելու ձեր ցանկությունը: Ընդհակառակը, ձեզ կհամարեն հետադիմական մի ժողովուրդ, որ շարք հետո է մնացել մյուս ժողովուրդների համեմատությամբ:

... Մոսկվան վերջապէս գրկաբաց ընդունեց Էնվերին: ... Նրա մի հայտարարությունն ընթերցվել է Բաքվում Արեւելյան ժողովուրդների համագումարի բեմից, որին նախագահում էին Զինովեյն ու Ռադեկը, եւ որին ներկա էր եղել Ջոն Ռիդը» (Գլ. Ժ) :

«Սակայն, բոլշևիկներից բացի, ուրիշներ էլ էին հետաքրքրվում երիտթուրքերի վարչակազմի անկյալ հրեշտակներով: Բոսպորում, Ժնևում, Թիֆլիսում ցրված մի բուռ դաշնակցական հայեր երդվել էին գործադրել օսմանյան դարական բարձրագույն ապրանքի մահալճիդը: Նրանք իրենց գործունեությունը սկսեցին Նեմեսիս նշանաբանով, որը վրեժխնդրության աստվածուհին է հունական դիցաբանության մեջ: «Այսպէղ, կարող ենք ասել, ավարտվում է ամթալի ժամանակագրությունը սուլթան Աբդուլ Նամիդի եւ այն 3 փաշաների, որոնք, նրա հետեւից, միմարեթների երկիրը գրեցին խավարի անհատական անդունդը: Մարդկանց աչքերը երբեք չեն մոռացել այն, ինչ տեսել էին, եւ ականջները՝ այն, ինչ լսել էին: Բայց Պարսկությունը բարոյապէս շարք շարք չէ: Այն ժամանակ, երբ Եւրոպան եւ ամբողջ աշխարհը բոցավառվում էին երկրորդ անգամ լինելով, գերմանական ռայխի արիացի կանցլեր Ադոլֆ Նիպլերը, թելադրված ազնիվ մի ուշադրությունից, Թալաթ փաշայի աճյունը նվիրեց թուրքական պետությանը, որը ներքին գործերի նախկին նախարարի պարվին կառուցեց շքեղ մի հուշադամբան Ազգության բլրի վրա: Կարծես դա բավական չլիներ այդքան երեւելի մի անձնավորության համար, Անկարայի ծառուղիներից մեկը մկրպակեց նրա անունով, որպէսզի ներկա եւ ապագա սերունդների օրհնությունն իջնի նրա վրա: Յուրաքանչյուրն սրացավ իր բաժինը: Երբ քառասունյակները հաջորդեցին քառասունյակների, քառիները՝ քառիների եւ սերունդները՝ սերունդների, Էնվեր փաշայի մարմինը հետխորհրդային շրջանում հայրենադարձվեց Թաջիկիստանից, որպէսզի մեծ պարիվներով թաղվի հարգանքով ու հիացմունքով համակված մի ամբողջ ժողովրդի առջև՝ գլխավորությամբ Նախապետության նախագահի, նրա նախարարների եւ գեներալների: Ջեմալ փաշան՝ միշտ հետին գծի վրա գտնվող այդ մորթավորը, մեծարանքի արժանացավ Էրզրումում: Նա արդեն 80 տարուց ի վեր մահացել էր, երբ աղմուկ-աղաղակով, խելահեղ բացականչություններով եւ հիացական զեղումներով հարբած ժողովրդի մի մեծ բազմություն ժամադրվեց նրա գերեզմանի առջև՝ գովաբանելու համար նրան:

Իմացության եզրին մնացած միամիտ եւ դարարկ հոգիներն անգիտանում եւ արհամարհում են անցյալի իմաստունների քաղաքականություններն ու հին ժողովուրդների մաքրանները, ուր, իմիջիայդ, ասված է. «Արդ, այսպէս է, որ վաղ թե ուշ, իսկ հաճախ ավելի վաղ, քան թե ուշ, ճակարագիրը կուրացնում է չար մարդկանց հիշողությունը, խլում նրանցից ամեն պայծառամտություն եւ վերացնում նրանց քրեականությունն ու լսողությունը: Այնժամ

մնալով կույր, խուլ ու համր, նրանք այլևս չեն կարողանա եր իրենց արդը դառնալ»((Գլ. ԻԱ):

Աշխատությունն ավարտվում է Ֆիլիպ Վիդլիի եզրակացությամբ. Թուրքիան, հակառակ աշխարհին որպես վերափոխված ու քաղաքակրթված երևալու մարմաջին, մնում է նույն արյունախում ոճրագործը:

Եւ պատահական չէ, որ գրքի բնագիր ֆրանսերեն հրապարակության, (ֆրանսերենը՝ Փարիզ, 2005 թ.) շապիկի վրա պատկերված են արյունվա ձեռքերով դաժան դիմագծերով թուրք զինվորականները՝ զինված գնդերով, դանակներով ու յաթաղաններով:

Գիրքը թարգմանված է նաև հունարեն, ռուսերեն, իտրվաթերեն, բուլղարերեն եւ այլ օտար լեզուներով:

ՍԵՂԱ ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ